

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՊՐԻՃՓՈՐԹ, ՔԸՆԵԹԻՔԸԹ



Trustees of
The Armenian Church of
The Holy Ascension
1241 Barnum Avenue
Bridgeport, Conn.

Միամեայ Տեղեկագիր

Պրիճֆօրթի Ս. Համբարձում Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւ Խորեն Քչմյ. Մամիկոնեանի

1956 տարւոյն

.....

Յարգելի Ատենապետ եւ Պատուարժան Կերկաներօ

Անցեալ 1955 ի կէս տարեշրջանէն վերջ, ահա ամբողջ տարի մըն է կանցնի, 1956 ը, եւ մենք իրարու հետ ենք, բոլորուած մեր Ս. Եկեղեցւոյն շուրջ, բարեացակամ վերաբերումով առկայ ենք: Քննական եւ պատասխանելի հարցը ամէն մեկերնուս համար սա է, թէ՞ Աստուծոյ, իր Տան եւ Ազգիս համար, անցնող տարուան ընթացքին, ըրի՞նք, ինչ որ պետք է ընել. չէ՞ որ կընար անելին ընել, ինչո՞ւ չըրի՞նք, ու այս քննութիւնը եթէ անաչառ է վերաբերուելու, իսկ եթէ եսասիրական է մոլորեցնող: Օրինակ, կընանք հարցնել ինքզինքեան, թէ ամէն կերակի Եկեղեցին կըրթամ՞ Ս. Պատարագ տեսնելու, ինչո՞ւ չեմ երթի՞ր, իրան՞ է, արդար՞ է չեթաւուս պատճառները. շաբաթը անգամ մը պետք չէ՞ երթամ իմ Երկնաւոր Հօրս հետ խօսելու, ըսելու իրեն, "Հայր, շնորհակալ եմ քեզմէ այն բոլոր շնորհներուն համար որ տուիր ինձի այս շաբթուան ընթացքին, չեմ կընար ըստ արժանւոյն փոխարինել երախտադիտական արտայայտութեամբ, բայց որդիդ եմ, "Ձինչ եւ իցեմ", ընդունէ՞ քու անառակ որդուդ զընդամը "Հայր, մեզայ յերկինս եւ առաջի քո", որերն իմ է որ չենք կընար այս խոնարհութիւնն ընել, երբ մարդկային ոչ մէկ վկայ ունինք մեր խոստովանութեան, այլ վերջինս կախած, առանց շրթներս իսկ շարժելու, հոգիով խօսինք մեր Հօրը հետ ու խորհրդէնք Անոր բարեգլխութիւնը:

Անցեալները մեր Եկեղեցիին պատկանող անձի մը քիչ անգամ եկեղեցի դառն երբ յիշեցուցի իրեն, տնական գործերով զբաղած ըլլալը պատճառ ցոյց տուան, պլլուելով սա սահող արդարացու մին, թէ՞ ժողովուրդը կուգայ եկեղեցի" . ըսի իրենս. — "Այդ ժողովուրդներն մեկն ալ դունն ես, երբ դուն չես գար, ինչ՞ արդարացումով կը սպասես որ ուրիշներ գան թէ իրենց տեղ, եւ թէ քո տեղը, երբ անոնք ալ կընան ըսել, թէ տանս տախտը կաւելի, կամ ամանները կը լուսայի, բամբասելով կ'ինդ, որ ամանները չլուսար եւ քեզի լուսալ կուտայ, իսկ եթէ կ'նշմեդ հարցնենք նոյն իսկ առանց հարցնելու անգամ գիտենք, որ ըսածդ ճիշտ չէ, եւ յետոյ, ամէն մարդ ալ կըրնայ քո արդարացումներու մօտաւորապէս նմանները գտնել եւ ըսել, ուրեմն այս եկեղեցին ինչո՞ւ ունեցաք, ու եթէ եկեղեցին չպիտի գայիր, ինչո՞ւ դրամ տուիր անոր գնման ալ, սարքով մին ալ չ'եսէր Հայր, իրանունք ունիս" . ըսաւ ու գնաց: Անգամ մը երեսը տեսայ եկեղեցիին մէջ, սուտ չէր խօսած ոչ ինձի եւ ոչ Աստուծոյ: Ախտավարակ այս ծուլացումը իմ թեմիս միայն չէ, ամերիկահայ բոլոր թեմերունն ալ է: Այս հարցը, որ թեեւ անհատական, հաւաքական ալ է, կը թողում, որ ամէն անհատ ինքնաքննութիւն կատարէ, թէ իր վերաբերմանքը արդար եղած՞ է իր Աստուծոյն, Անոր Տանը եւ իր Ազգին հանդէպ, ու կ'անցնիմ անարկելու խնդիրներուն անոնց որոնք անձնապէս ինձի կը վերաբերին, որպէս Հովիւի, բաժնեկրկ Հոգաբարձութեան տեղեկագիրն եւ ս: Յարաբերական. — Տարուանս ընթացքին Պատ. Հոգաբարձութեան, Եկեղեցասէր Տիկնանց եւ Երիտասարդաց Միութիւններուն վարչութեանց եւ անդամներուն եւ բոլոր ժողովուրդեան հետ իմ ու իրենց իրարու հանդէպ ունեցած յարաբերութիւնը եղած է շատ սիրալիւր ու յարգալիւր, եւ ես կը յայտ

նեմ իմ խորին շնորհակալութիւնս ամենուն ալ, հայցելով նաեւ Աստուածային օրհնութիւն: Այցելութիւններ.— Ընտանեկան յարաբերութիւնները շատ հաճելի են եւ շատ ալ օգտակար: Դժբախդաբար օթօն վարեւոյս արտօնքիբը չկարեւակ առնելուս հետեւանքով ~~առ~~ ամիս է որ օթօս վարեւոյս դադարած ըլլալուս պատճառաւ աւելին չեմ կրցած ընել, քան ինչ որ ըրած էի:

Հիւանդներ.— Տուներու մէջ թէ հիւանդանոցներուն, երբ ինձի Լուր տրուած է այցելած եմ իսկոյն: Դժբախդաբար, ասոնց տէրերը, սխալ բայց ընդհանրացած մտածելակերպով, կը սպասեն, որ ուրիշներ ինձի Լուր տան այդ հիւանդին մասին, եւ ակնկալուած այդ ուրիշներէն շատերը պարտականութիւն չեն զգար ինձի գիտցնելու, եւ ես, շատ յաճախ, ասոնց մասին կը Լսեմ անուղղակի կերպով, ու շացած Լուր մը:

Տնօրհանէնք եւ թեմին ցանկին պատրաստութիւն.— Տարւոյս Ս. Ենիգեան եւ Ս. Յարութեան տօներուն առթիւ 76 տնօրհանէնքներ ու այդ տուներուն ալ բնակիչներուն մանրամասնեալ ցանկը պատրաստած եմ թէեւ, բայց նոյն չափ մըն ալ կան դեռ պատրաստուելիք, երբ օթօն ունենամ:

Ս. Պատարագ.— Անցնող ամիսներու ընթացքին մատուցած եմ 48² անգամ Ս. Պատարագ. քարոզ խօսած եմ 42 անգամ. ամառուան ամիսներուն ծանուցումներով բաւականացած: Տարւոյս փետր. 12ին Պատարագեց Երուսաղէմի մեր վանքին նուիրակ Հոգեշ. Տ. Գիւրգիզ վրդ. Գաբրիէլեան եւ յետոյ ալ ի նպաստ վանքին կատարեց հանդանակութիւն, որուն դումարը կը հասնի 7-800 տոլարի, կարծեմ: Բացակայած եմ Յուլիս 10 ին Լ. օրէնս. Հոկտ. 14 ին, փրակիտէնս, Երեսփոխ. Ժողովին առթիւ. Նոյ. 11 եւ 25. Դեկտ. ~~16~~ 30, Նիւ Պրիթըն եւ Հարթֆիլտ ըլլալուս առիթներով, ըստ հրահանգի Սըրբազան Առաջնորդ Հօր, եւ համաձայնութեամբ Պատ. Հոգաբարձութեան:

Ժողովներ.— Նախագահած եմ Անդամական, Հոգաբարձական, Եկեղեցական Եւ Երիտասարդաց ինչպէս նաեւ ձեռնարկներու ժողովներուն:

Երեսփոխանական ժողով.— Այս տարի տեղի ունեցաւ Փրակիտէնսի Ս. Սահակ—Մեսրոպ Եկեղեցւոյ մէջ, տարւոյս Հոկտ. 13-14 ին: Մեր Երեսփոխանները— Պ. Վարդան Միսմալեան եւ Պ. Յովհաննէս Տեմիրճեան եւ ես միասին գնացինք ժողովին եւ վերադարձանք: Այդ մասին ձեզի պիտի զեկուցանեն Պատ. Երեսփոխանները:

Կիրակնօրեայ Դպրոց.— Ունինք 7 վարժուհի եւ 25 երկսեռ աշակերտ: Վարժուհիները պարտաճանաչ են, և կը տանին իրենց վստահուած գործը: Երեցուհին 2-3 կիրակին անգամ մը, հրակիրուած ըլլալով վարժուհիներէն, կը բթայ խօսելու իրենց կրօնական նիւթերու շուրջ: Գաջալերութեան եւ շնորհակալութեան արժանի են օրիորդ եւ տիկին վարժուհիները:

Ազգային Դպրոց.— Ձունեցանք տակաւին: Խնդիրը կը ներկայացնենք Պատ. Ժողովիդ նկատառման: Դասախօսական, Վիճաբանական ժողովներ.— Հոգաբարձութեան սեղանին վրայ է խնդիրը եւ կը սպասէ Լուծման իր հերթին: Խնդիրներ կան, որոնք արտաքինապէս շատ փոքր ու իրենց Լուծումն ալ շատ հեշտ կ'երեւին, իրենց մօտեցած ատենն է որ դժուարութիւնը կը զգաս:

Դպրաց Դաս.— Այդ անունով մարմին գոյութիւն չունի: Գրանի մը օրիորդներ են որ կուզան երգելու: Երբեմն 1-2 հոգի, երբեմն քանի մը հոգի: Շատ շնորհակալ ենք իրենց, որ այդ չափն ալ կը նեն: Օրեր կ'ըլլան, որ կը դիմենք Պ. Վարդան եւ Տիկին Գեղանուշ Միսմալեաններուն եւ Երեցուհիին, որ զան շապիկ հագնին եւ երգեն, եւ շնորհակալ ենք իրենցմէ, որ երբ կանչած ենք անմիջապէս ալ եկած են եւ կարիքը բաւարարուած է: Մեր երգող օրիորդները— Տեր Մկրտիչեան, Թօփալեան, Մարտեան, Թարատեան, Ջարիֆեան, Տեմիրճեան, Ապաճեան, Գրիգորեան, Գամբոս, Վալանթինօ, շատ ներդաշնակ կերպէն, որոնց կ'ընկերանան շատ քիչ անգամ տղաներէն: Նօրօեան եւ Թիւթիւն—ճեան— Ներողամիտ կ'ըլլան անոնք, եթէ իրենց անունները յիշատակելու մոռցած եմ— բայց կանոնաւոր, ամէն կիրակի չեն գար, ու չ'ընկերան, նոյն իսկ Պատարագի կեսին եկողներ կ'ըլլան, եւ ե

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՊՐԻՃՓՈՐԹ, ԳԸՆԷԹԻՔԸԹ



Trustees of
The Armenian Church of
The Holy Ascension
1241 Barnum Avenue
Bridgeport, Conn.

ես այդ անհետաքրքրութիւնն ու անկանոնութիւնը կը վերադարձնէ երկու պատճառի, մէկը, որ դարպակտ չունինք, որ արդէն գիտցածներուն վրայ նոր բաներ սովորեցնելով իրենց մէջ հետաքրքրութիւն ու ճաշակ անեցնէ, եւ այս պատճառին վրայ կուգայ անեւնալ միւս երկրորդը, տարիքի եւ ասոր թեւադրութեան հետեւանքը: Գանի մը անգամ կանչեցի զիրենք եւ իբր դարաց խումբ արձանագրուած Երիտասարդաց Միութեան անդամները, որ սովորեցնեմ իրենց, դժբախտաբար չեկան, եւ... ձեռնթափ եղայ: Առաջնորդ Սրբազան Հայրը Թ տարևոյս գումարուած Երեսփոփոցովին մէկ որոշումը հաղորդած է մեզի, որ տեղական դպրաց դասի անդամներէն պատրաստենք դըպրակետ: Մեր թեմին մէջ միայն տիկին մը կայ, որուն ԹՅ սովորելու Լաւագոյն ընդունակութիւնը, շատ յաջող, քաղցր ձայնը, հայերէն Լեզուի գրեթէ տիրակալութիւնը եւ անգլիերէն Լաւ եւ սահուն խօսիլը գրեականներ են, որ կ'ընայ յաջողիլ, եթէ ուզէ ընել ի շահ եւ ի պայծառութիւն Ս. Եկեղեցեոյս, եւ ես պատրաստ եմ օգնել իրեն կարողութեանս չափով, առանց ոեւէ ակընկալութեան: Այդ տիկինն է Գեղանուշ Ստամպուլեան: Իսկ ըստ դասուն խնդիրը կը յանձնեմ Պատկ. Ժողովիդ Լուրջ ուշադրութեան:

Կարգեր. - Անցնող տարուան ընթացքին կատարած եմ 4 Մկրտութիւն, 2 Պսակ եւ 3 Թաղում:

Վերջացնելով 1956 տարևոյ տեղեկագիրս, կը մաղթեմ Ժողովիդ Աստուածային օրհնութիւն եւ յաջողութիւն:

Հոգեւոր Հովիւ Ս. Համբարձում Եկեղեցեոյն Պրեծիօրթի Խորէն Քհնյ. Մամիկոնեան

Օրհնելիստ. - Տասնուվեց տարի է ի վեր օրիորդ Բօզի Թաշճեան Ս. Եկեղեցեոյս օրհնը կը նուազէ, առանց ոեւէ վճարքի, անշահախնդրօրէն, մօտեցս, իր երջանիկ ամուսնութեանը առթիւ պիտի դադրի հոգեկան սերէլի այդ ծառայութենէն: Խորապէս գնահատելով իր ծառայութիւնը, եւ յայտնելով իմ, Հոգաբարձութեան, Եկեղեցասէր Տիկնանց Միութեան եւ բոլոր Ժողովուրդեան շնորհակալութիւնը, կը մաղթենք իրեն Լիակատար երջանկութիւն ապագայ իր կեանքին մէջ: Այս կայտութիւնը դարձանելու համար որով կ'ընայինք դարձունել աչքերնիս, ըսցի Օրիորդ Ամա Մաթոսեանէ, որ ինքնանուիրումով, սովորեցան օրհն նուագելը, եւ պատրաստ է իր վրայ վերցնելու այդ ծառայութիւնը: կը յայտնենք իրեն մեր գնահատութիւնը, շնորհակալութիւնն ու մաղթանքը:

~~Հարգելի Պատկ. Սրբազան Հայրը եւ Սրբազան Երեսփոփոցովին, որոնք ինչպէս իմ կողմէն իմացած է իմ հոգեկան սերէլի այդ ծառայութենէն, որով որ իմ կողմէն իմացած է իմ հոգեկան սերէլի այդ ծառայութենէն, որով որ իմ կողմէն իմացած է իմ հոգեկան սերէլի այդ ծառայութենէն:~~

~~Սրբազան Հայրը եւ Սրբազան Երեսփոփոցովին, որոնք ինչպէս իմ կողմէն իմացած է իմ հոգեկան սերէլի այդ ծառայութենէն, որով որ իմ կողմէն իմացած է իմ հոգեկան սերէլի այդ ծառայութենէն:~~

այդ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՊՐԻՃՓՈՐԹ, ՔԸՆԹԻՔԸԹ



Trustees of
The Armenian Church of
The Holy Ascension
1241 Barnum Avenue
Bridgeport, Conn.